

225

19 MAY 2005

ՀՀ ԼժԿ-ի ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԱԾ
ՊԵՆՍԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հեռակա կոնսուլյացիա սկսեալ ուսուցչից

ОБЯЗАТЕЛЬНЫЙ

ЭКЗЕМПЛЯР

ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՓՈՐՁԸ ՅԵՎ ԼԱԲԱՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ
ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

5

У-94

ԼՈՒՍՀՐԱՏ

Յերեան

1940

Ա. ԳՐԻԳՈՐԹԱՆ

ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՓՈՐՁԸ ՅԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲՆԱ-
ԳԻՏՈՒՅՑԱՆ ԴԱՍԻՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Կուսակցության 18-րդ համագումարում ընկ. Մուրտուզյան խնդիրը դրեց, վոր միջնակարգ դպրոցն ավարտողները ապագա գործնական աշխատանքների համար վորոշ պատրաստություն ստացած լինեն: Այդ ցուցումից բղխում է գործնական աշխատանքների ուսուցումը բարելավելու պահանջը նաև տարրական դպրոցում: Չորրորդ դասարանի յերեսան պետք է գիտենա հիմնական փաստական գիտելիքներ շրջապատող աշխարհի բնական յերևույթների մասին, նա պետք է իմանա ինչ է ողը, վորոնք են ջրի հիմնական հատկությունները, ինչպիսի բույսեր և կենդանիներ կան, ինչպես է կառուցված մարդու որգանիղմը, և այս յերևույթներն ինչպես են հակադրվում կրոնական մեկնաբանություններին և այլն:

Այս բոլորի մասին յերեսան լրիվ-իրական պատկերացում կունենա միայն այն ժամանակ, յերբ նա գիտակցի փաստը, ծանոթանա ռեալ յերևույթին: Բնագիտության դասավանդման ընթացքում այդ հնարավոր է տալ լայնորեն կիրառելով գործնական աշխատանքները, հատկապես ցուցադրական փորձն ու լաբորատոր աշխատանքը: Չավ և հաջող ցուցադրումները, հետաքրքիր, պարզ և մատչելի լաբորատոր աշխատանքները դասարանում վոշ միայն յերեսայն հետաքրքրություն են շարժում դեպի ուսումնական գիտցիպլինը և վորոշ խթան են դառնում դպրոցից դուրս, նրա ինքնուրույն ստեղծագործության, այլև նըրանց մեջ դաստիարակում են կայունություն, ճշտապահություն, աշխատասիրություն և այլն:

Ցուցադրական լաբորատոր փորձի կիրառումը տարրական դպրոցում սերտ կապված է ամբողջ դասարանական աշխատանքների հետ, այն է՝ ուսումնական նյութի բովանդակության, դասի կառուցվածքի, մանկավարժի մեթոդական զինվածության,

յերեսաների պատրաստականության, ուսումնական նյութերի ու սարքավորման առկայության հետ և այլն:

Համառոտակի նշենք ուսուցչի ցուցադրական փորձը և աշակերտների լաբորատոր աշխատանքների ձևերը:

1. Ցուցադրակում փորձ. — (դեմոնստրացիա) սովորաբար ցուցադրական փորձերը կատարվում են ուսուցչի կողմից. այսպես որինակ՝ ջրի թորումը, ջրի սառեցման և յեռման կետի վորոշումը, աղի լուծույթի գոլորշիացումը, գորտի մկանների աշխատանքը, լուծվող և չլուծվող նյութերը, ջրի ընդարձակումը ջերմությունից, վոսկորների կազմությունը և այլն:

Ցուցադրական փորձի ժամանակ պետք է դրական կերպով լուծել մի շարք պահանջներ.

1. Ամեն մի փորձի ժամանակ, աշակերտների միտքը պետք է կենտրոնացնել ցուցադրվող բուն յերևույթի վրա, հեռացնելով յերեսանների ուշադրությունը գործիքի արտաքինը դիտելուց: Դրա համար փորձի դրման ժամանակ պետք է աշխատել փորձանոթները, գործիքները կառուցել ամենահասարակ ձևով մեծ մասամբ ոգտագործել յերեսաններին ծանոթ ափսոսներ, բռնիչների փոխարեն գործածել հասարակ լար, կամ թուկ. վորպեսզի յերեսան շատ չգրավվի անծանոթ իրերով, կամ ուշադրավ ուժեղ ձայներով ու փայլով:

2. Փորձը պետք է կատարել առանց շտապելու, բացատրելով կատարվող յերևույթների հետևողականությունը, հաճախակի հարցնելով յերեսաններին՝ պարզելու համար, թե վորքան են ըմբռնել փորձի ելույթները:

3. Ցուրաքանչյուր փորձ ուսուցչի կողմից պետք է նախորոք մշակված ու քննարկված լինի, ուստի մեկից ավելի փորձեր չպետք է դնել:

4. Փորձը պետք է տեսանելի լինի աշակերտներին ամեն կողմից: Ցուցադրման ժամանակ պետք է վերցնել ավելի խոշոր գործիքներ: Ավելի լավ կլինի՝ փորձը կատարելիս նրա հետևը դնել սպիտակ եկրան, փորձը լավ տեսանելի դարձնելու նպատակով:

5. Փորձի արդյունքները դիտելու համար՝ անհրաժեշտ է փորձանոթը մոտեցնել աշակերտներին անհատորեն:

6. Վորպեսզի փորձը հաջող անցնի անհրաժեշտ է, վոր ուսուցչիչը նախորոք կատարի այդ փորձը: Փոքրիկ անհաջողու-



թյունը կարող է բացասաբար անդրադառնալ վողջ աշխատանքի ընթացքի վրա:

7. Փորձը նախապատրաստելիս ուսուցիչը պետք է նախորդը մտածի վող միայն իր բանվորական տեղի ընտրություն մասին, այլև պետք է մանրամասնորեն գրի առնի, թե ինչ է հարկավոր տվյալ փորձի համար՝ նախորդը ստուգելով ամեն մի մանրույթ (արդյո՞ք լցված է լամպը սպիրտով, լուցկի կա՞ն և այլն):

8. Յուրաքանչյուր փորձը միայն ցուցադրվող բնույթի չպետք է կրի, այլ պետք է ոգնի աշակերտներին՝ հանելու ինքնուրույն յեզրակացություններ: Որինակ՝ դիտելով գորտի ներքին և արտաքին կազմությունը, այն պետք է համեմատել ձկան և այլ կենդանիների կազմության հետ՝ հանելով ընդհանուր յեզրակացություններ: Ընդհանրապես փորձը վերջացնելուց հետո պետք է կատարել ընդհանրացում, համառոտակի պատմելու կամ հարցերի միջոցով:

Ուսուցչի ցուցադրական փորձից բացի՝ տարրական դպրոցում կարելի չէ կիրառել նաև աշակերտների ինքնուրույն լաբորատոր աշխատանքներ՝ ուսուցչի անմիջական ղեկավարությունով: Բնագիտության դասատուն պարտավոր է սխտեմատիկորեն աշակերտներին սովորեցնել ինքնուրույն փորձեր կատարելու: Արդյունքը պետք է լինի այն, վոր աշակերտը սովորի դիտել, վերլուծել և վորոշ հետևություններ հանել: Նայած վոր դասարանում է տարվում լաբորատոր ինքնուրույն աշխատանքը, ինչ թեմա չեն անցնում, վորքանով է աշակերտը ծանոթ այդ տեսակի աշխատանքներին, ըստ այնմ էլ գործադրվում են հետևվյալ ձևերը:

1. Ուսուցիչը հաջորդականությամբ նշում է փորձի առանձին մասերը, վորն աշակերտներն անմիջապես կատարում են: Արդյունքների քննարկումը կատարվում է զուգընթաց: Աշակերտների ինքնուրույնությունն այս դեպքում չափազանց քիչ է: Այս ձևը կիրառվում է միայն սկզբնական շրջանում, վերք սովորողները բոլորովին չեն տիրապետում ինքնուրույն աշխատանքի ունակություններին:

2. Ուսուցիչը ցուցումներ է տալիս փորձի համեմատորեն մեծ մասի կատարման մասին: Քննարկումը կատարվում է նույն ժամին, փորձի ամեն մի բաժինը կատարելուց հետո: Այդպիսի հրահանգման ժամանակ, աշակերտների ինքնուրույնությունը թեև

ավելի շատ է, քան առաջին դեպքում, սակայն դեռ անբավարար է:

Ուսուցիչը միանգամից տալիս է հրահանգ ամբողջ փորձի համար, վորն աշակերտները կատարում են ինքնուրույն կերպով: Աշխատանքի արդյունքների քննարկումը կատարվում է միայն լրիվ փորձերից հետո: Հրահանգման այս ձևը հանդիսանում է լաբորատոր աշխատանքի ավելի բարձր տիպը: Այս դեպքում աշակերտների ինքնուրույնությունը հանդես է գալիս լրիվ չափով:

4. Կա նաև հրահանգման մի այլ ձև, վորն իր մեջ ունի փորձի նախնական անալիզը: Այս ձևը նպատակ ունի առաջ բերելու գիտակցական վերաբերմունք դեպի կատարվող աշխատանքը, աշակերտների մեջ դարձեցնելու ցուցադրական միտք: Յկրեխաներն ուսուցչի ոգնությունով յենթադրություններ են առնում այն մասին, թե ինչպես կարելի չէ լուծել տրված հարցը: Հրահանգման այս ձևի գործադրումը կախված է նրանից, թե վորքան հաճախակի են կիրառվում լաբորատոր աշխատանքները, վորքան է ուսուցիչն իր դեմոնստրացիայի ժամանակ հետադոտական աշխատանք տանում, վորքան է դարգացած աշակերտների մեջ տրամաբանական մտածողությունը և, վերջապես, վորքան են նրանց փաստական դիտելիքները, վորպեսզի պատկերացնեն փորձի յենթադրվող արդյունքները:

Այս բոլորից հետո պետք է նշել, վոր տարրական դպրոցում գերադասելի չէ հրահանգման առաջին ձևը՝ մանավանդ այն պատճառով, վոր այդ դեպքում դասարանի դիսցիպլինան չի խախտվում քանի վոր փորձի ամեն մի մասը թելադրվում է ուսուցչի կողմից, իսկ աշակերտները լարված զրուխամք կատարում են այդ թելադրանքը: Հետագայում ուսուցիչն այնպես պետք է դեկավարի լաբորատոր աշխատանքները, վոր յերեխաները աստիճանաբար սովորեն ինքնուրույն կերպով կատարել փորձեր:



Սրբազան Վ. ՊՈՂՈՍՅԱՆ
Գլավիտի լիազոր՝ Բ-1101, հրատ № 8
Գառվեր № 27, տիրած 1000

Լուսհրատի տպարան.

Յերեվան, Տերյան № 127

ՀՀ Ազգային գրադարան



NL0249904

19751